

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Գասպարյան Գարրի Գարիկի

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ ՊԱԿՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»  
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

**Ատենախոսության թեման հաստավել է Հայաստանի պետական  
տնտեսագիտական համալսարանում**

**Գիտական ղեկավար՝**

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
**Դանթարյան Ռուբեն Սուրենի**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Աբրահամյան Վահրամ Գևորգի**

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
**Մատինյան Ալվարդ Գարեգինի**

**Առաջատար կազմակերպություն՝**

**Հայաստանի ազգային ագրարային  
համալսարան**

**Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2025 թվականի հունվարի 24-ին՝ ժամը 15:00-ին, Երևանի պետական համալսարանում գործող <<ԲԿԳԿ-ի  
Տնտեսագիտության 015 մասնագիտական խորհրդի նիստում:**

**Հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան փող. 52:**

**Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:**

**Սեղմագիրն առաքված է 2024թ. դեկտեմբերի 24-ին:**

**Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝**

*Mr. Arshak*

**Ա.Հ. Հակոբյան**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Ատենախոսության թեմայի արդիականությունը:** Վերջին ժամանակներում մարդկությունը առերեսվում է էկոլոգիական բարդ և բազում մարտահրավերների, որոնց առաջացման առանցքային գործոնը հասարակության՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն ունեցող տնտեսական գործունեությունն է: Տնտեսական գործունեության բարեփոխման և էկոլոգիական խնդիրների լուծման կարևորության ու հրատապության գիտակցումը այժմ ստացել է գլոբալ բնույթ, ինչը միանգամայն բնական է, քանի որ դրանց անտեսումն ու հետագա սրացումները կարող են հանգեցնել էկոլոգիական, տցիալական աղետների և տնտեսական ճգնաժամերի: Աշխարհում արդեն ամրապնդվում է այն գաղափարը, որ տնտեսական արտադրահարաբերությունների էկոլոգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը ոչ միայն չի խոչընդոտում, այլ սովորաբար նպաստում է տնտեսության զարգացմանը՝ հնարավորություններ ստեղծելով հասարակության կայուն զարգացման ապահովման համար:

Ներկայում էկոլոգիական ամենասուր ու ոփոկային հիմնախնդիրներից է համարվում մթնոլորտային օդի աղտոտումը, որը կլիմայի գլոբալ փոփոխության, հանրային առողջության վատքարացման ու բարեկեցության անկման, և, ընդհանրապես, շրջակա միջավայրի քայլայման պատճառ է հանդիսանում:

Մթնոլորտային օդի պահպանության խնդիրը սուր կեպով է արտահայտված նաև Հայաստանի Հանրապետությունում: Ըստ Միավորված ազգերի կազմակերպության հրապարակած տվյալների՝ Հայաստանում մթնոլորտային օդի աղտոտվածությունը 6.8 անգամ գերազանցում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից սահմանված ցուցանիշը և յուրաքնչյուր տարի հանգեցնում է քաղաքացիների հազարավոր մահերի, մասնավորաբեր միայն 2019թ. մահերի թիվը հասել է 3091-ի<sup>1</sup>, արդյունքում մթնոլորտային օդի աղտոտմամբ պայմանվորված կորուստները հանրապետությունում վերջին տարիներին համարժեք են եղել ՀՀ-ի ՀՆԱ-ի 11%-ից ավելին<sup>2</sup>: Մթնոլորտային օդի աղտոտման տնտեսական բացասական հետևանքներից զատ պետք է նաև նշել, որ մաքուր, առողջ և կայուն միջավայրը հանդիսանում է մարդու հիմնարար իրավունքների անքակտելի մասը, ինչը 2022թ. ամրագրվել է Միավորված ազգերի կազմակերպության Մարդու

<sup>1</sup> UNEP, “Pollution Action Note”, <https://www.unep.org/interactives/air-pollution-note/> (last acces - 29.06.2024)

<sup>2</sup> OECD.Stat, “Mortality, morbidity and welfare cost from exposure to environment-related risks”, [https://stats.oecd.org/Index.aspx?DataSetCode=EXP\\_MORSC#](https://stats.oecd.org/Index.aspx?DataSetCode=EXP_MORSC#) (last acces - 29.06.2024)

իրավունքների խորհուրդի կողմից ընդունված պատմական բանաձևով<sup>3</sup>: <<-ում անվտանգ շրջակա միջավայր ապահովելու կարևորությունը ամրագրված է երկրի մայր օրենքում, մասնավորաբար՝ համաձայն << Սահմանադրության 12-րդ հոդվածի՝ պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև<sup>4</sup>: Շրջակա միջավայրի պահպանության համաշխարհային փորձը վկայում է, որ շրջակա միջավայրի, այդ թվում՝ մթնոլորտային օդի պահպանության խթանման եթե ոչ լավագույն, ապա ամենարդյունավետ մոտեցումներից է հանդիսանում տնտեսական կառուցակարգի գործադրումը:

<<-ում անկախացումից ի վեր մթնոլորտային օդի պահպանության բնագավառում ձևավորվել և բանեցվում է որոշակի տնտեսական կառուցակարգ: Սակայն, հաշվի առնելով մթնոլորտային օդի աղտոտմամբ պայմանվորված հանրապետությունում առկա էկոլոգատնտեսական պատկերը, ինչպես նաև մթնոլորտային արտանետման անշարժ աղբյուններից անջատվող վնասակար նյութերի որսման խիստ ցածր մակարդակը և արտանետումների աճ դրևորելու միտումը՝ ակնհայտ է դառնում՝ մթնոլորտային օդի պահպանության ազգային տնտեսական կառուցակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված քայլերի և միջոցառումների մշակումն ու իրականացումը խիստ արդիական է և հրատապ:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Հետազոտության նպատակը Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային օդի պահպանության բնագավառում գործադրվող տնտեսական կառուցակարգի առկա հիմնախնդիրների բացահայտումն ու դրանց լուծման հնարավոր ուղիների առաջադրումն է:

Նշված նպատակին հասնելու համար ատենախոսությունում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել շրջակա միջավայրի պահպանության բնագավառում գործադրվող տնտեսական կառուցակարգի տեսամեթոդական հիմունքներն ու առանձնահատկությունները մթնոլորտային օդի պահպանության համատեքստում,
- վերլուծել և հետազոտել մթնոլորտային օդի պահպանության տնտեսական գործիքակազմն ու դրա կիրարկման միջազգային փորձը,

<sup>3</sup> UNEP, “Advancing the Right to a Healthy Environment”, <https://www.unep.org/explore-topics/environmental-rights-and-governance/what-we-do/advancing-right-healthy-environment> (last acces - 29.06.2024)

<sup>4</sup> << Սահմանադրություն, 2015թ., հոդված 12

- ուսումնասիրել մթնոլորտային օդի պահպանության ազգային տնտեսական կառուցակարգը և գնահատել դրա ապահոված էկոլոգատեսական արդյունքները,
- գնահատել <<-ում մթնոլորտային արտանետումների և տնտեսության զարգացման միջև փոխկապվածությունները,
- բացահայտել ավտոտրանսպորտային արտանետումների կարգավորման տնտեսական կառուցակարգի անկատարություններն ու մատնանշել դրանց վերացման հնարավոր ուղիներն ու կառուցակարգի բարեփոխման հնարավորությունները,
- անշարժ աղբյուրներից մթնոլորտային արտանետումների կրճատում ապահովելու նպատակով առաջադրել գործադրվող տնտեսական կառուցակարգի կատարելագործման ճանապարհային քարտեզը և ուրվագծել կառուցակարգի զարգացման ռաջնահերթությունները:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Հետազոտության օբյեկտը <<-ում մթնոլորտային օդի պահպանության բնագավառում գործադրվող տնտեսական կառուցակարգն է: Հետազոտության առարկան մթնոլորտային օդի պահպանության ազգային տնտեսական կառուցակարգի կատարելագործման ու զարգացման հիմնախնդիրներն են:

**Հետազոտության մեթոդական, տեսական և տեղեկատվական հիմքերը:** Հետազոտությունում կիրառվել են գիտական ճանաչողության մի շարք մեթոդներ, այդ թվում՝ համեմատական վերլուծության, վերացրկման, ինդուկցիայի և դեղուկցիայի, գրաֆիկական մեկնաբանման, վիճակագրական և էկոնոմետրիկ մոդելավորման մեթոդները:

Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել շրջակա միջավայրի, այդ թվում՝ մթնոլորտային օդի պահպանության վերաբերյալ հայ և օտարազգի ականավոր գիտնականների գիտահետազոտական աշխատությունները, << և այլ պետությունների օրենքները, կառավարության որոշումները և այլ նորմատիվ իրավական ակտերը, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության, Առողջապահության համաշխարհային կազմակերպության, Միավորված ազգերի կազմակերպության գեկուցները, հոդվածները, հաշվետվությունները և աշխատանքային փաստաթյուրը: Տեղեկատվական հիմք են հանդիսացել վերոբերյալ կառուցների պաշտոնական կայքերը, դրանցում հրապարակված տվյալները, պաշտոնական տեղեկագրերը, << վիճակարգրական կոմիտեի տվյալների բազաները, << շրջակա միջավայրի և ֆինանսների նախարարությունների պաշտոնական կայքերը, ինչպես նաև միջազգային վիճակագրական և տեղեկատվական ամփոփագրերը և վերլուծությունները:

**Ատենախոսության գիտական նորույթը:** Ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրության հիմն վրա ստացվել են մի շաբթ արդյունքներ, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթներն են.

- <<-ում մթնոլորտային արտանետումների վրա տնտեսական զարգացման ազդեցությունների գնահատման արդյունքում բացահայտել ենք <ՆԱ-ի և մթնոլորտային օդ արտանետումների միջև առկա փոխառնչությունները:
- Բացահայտելով ավտոտրանսպորտային միջոցներից մթնոլորտային օդ վնասակար նյութեր արտանետողների հարկման մեթոդաբանական և համակարգային խնդիրներ՝ առաջարիթել ենք էկոլոգիական գործոնը արդյունավետորեն հաշվառող բնապահպանական հարկման նոր մոտեցումներ:
- Հիմնավորելով աղտոտման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ արտանետումների կարգավորման տնտեսական կառուցակարգի արդյունավետության բարձրացման հարկավորությունը՝ առաջարկել ենք դրա գործիքակազմի կատարելագործման առաջնահերթ քայլերը և մշակել համալրման գիտափորձնական ժամանակակից մոտեցում:

**Ատենախոսության գործնական նշանակությունը:** Ատենախոսության արդյունքների գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ իրականացված ուսումնասիրությունների արդյունքները, ներկայացված գիտական և գործնական առաջարկությունները կարող են օգտագործվել պետական մարմինների կողմից <<-ում մթնոլորտային օդի պահպանության բնագավառում գործադրվող տնտեսական կառուցակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված քայլերի և համայիր միջոցառումների մշակման գործում, գիտատեղեկատվական հիմք հանդիսանալ պետական էկոլոգիական քաղաքականության, զարգացման ռազմավարության, էկոլոգիական նորմատիվ իրավական ակտերի ծևավորման և բարեփոխման համար։ Ատենախոսության արդյունքները որպես ուսուցողական և տեսամեթոդական նյութ կարող են նաև օգտագործվել բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջակա միջավայրի և դրա տարրերի պահպանությանը նվիրված դասախոսությունների համար, միաժամանակ կարող են արթեքավոր լինել էկոլոգիական խնդիրներով ու դրանց լուծմամբ հետաքրքրվող մասնագետների և <<քաղաքացիների համար։

**Ատենախոսության արդյունքների փորձարկումը և իրապարակումները:** Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի «Բնօգտագործման տնտեսագիտություն» ամբիոնում, << շրջակա միջավայրի նախարարությունում,

ինչպես նաև գիտնականների և հետազոտողների հետ: Ատենախոսության հիմնական արդյունքները և դրույթները հրապարակվել են 8 գիտական հոդվածներում:

**Ատենախոսության կառուցվածքը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը շարադրված է 130 էջի վրա՝ առանց հավելվածների:


## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԴԱՐԱՎՈՐ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության «Ներածություն» բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության հիմնական նպատակը, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, աշխատանքի տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված հիմնական արդյունքները, ատենախոսության արդյունքների գիտական և գործնական կիրառական նշանակությունը, ինչպես նաև աշխատանքի կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության առաջին՝ «Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում գործադրվող տնտեսական կառուցակարգի տեսամեթոդաբանական հիմնահարցերը» գլխում ներկայացվել են շրջակա միջավայրի պահպանության բնագավառում գործադրվող տնտեսական կառուցակարգի էությունը, դեռն ու առանձնահատկությունները, ընձեռու առավելություններն ու հնարավլորությունները մթնոլորտային օդի պահպանության համատեքստում: Այս գլխում անդրադարձ է կատարվել նաև մթնոլորտային օդի պահպանության տնտեսական կառուցակարգի գործիքակազմին ու դրա կիրարկման միջազգային փորձին:

Շրջակա միջավայրի պահպանության բնագավառում գործադրվող տնտեսական կառուցակարգի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքում եզրակացվել է՝ մթնոլորտային օդի պահպանության տնտեսական կառուցակարգը իրենից ներկայացնում է՝ տնտեսական ձևերի և մեթոդների ամբողջություն, որը, տնտեսավարող սուբյեկտների մոտ տնտեսական շահագրգուվածություն ստեղծելով, նպատակառության համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի պահովմանը: Նաև արձանագրվել է, որ շոկայական տնտեսության պայմաններում շրջակա միջավայրի պահպանության հարցում տնտեսական կառուցակարգը առանցքային դերակատարում ունի, դա միտքած է լուծելու շոկայի ձախողմամբ պայմանավորված էքստերնալների հիմնախնդիրը, որոնց գոյությունը էկոլոգիական խնդիրների առաջացման պատճառ է հանդիսանում: Ինչ վերաբերում է մթնոլորտային օդի պահպանության

տնտեսական կառուցկարգի գործիքակազմին, ապա պետք է նշել, որ դա իրենից ներկայացնում է բազմարարադրիչ համակարգ, որի յուրաքանչյուր տարր հիմնված է սկզբունքորեն տարբեր մոտեցումների վրա (տե՛ս Գծապատկեր 1):



#### **Գծապատկեր 1. Մթնոլորտային օդի պահպանության տնտեսական կառուցկարգի գործիքակազմը<sup>5</sup>**


Միաժամանակ տնտեսական գործիքակազմի կիրարկման միջազգային փորձի ուսումնասիրությունից ակնհայտ է դարձել տնտեսական գործիքակազմի՝ համալիր գործադրման կարևորությունը և մթնոլորտային օդի պահպանության գործում էկոլոգատնտեսական դրական արդյունքներ ապահովելու բավարար ներուժի առկայությունը:

Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ-ում մթնոլորտային օդի պահպանության գործող տնտեսական կառուցկարգը և դրա արդյունավետության գնահատումը» գիտում վերլուծվել է մթնոլորտային օդի պահպանության ազգային

<sup>5</sup> Ժամանակակից գործությունների մասին պահպանության տնտեսական կառուցկարգի գործիքազմը ու կիրարկման միջազգային փորձը». Գիտական Արցախ, № 1(20), 2024, էջ 209-224, DOI: 10.52063/25792652-2024.1.20-209

տնտեսական կառուցակարգը, դիտարկվել են մթնոլորտային օդ արտանետումների շարժընթացները և դրանք պայմանավորող հիմնական գործոնները, հասարակության բավարարվածության մակարդակը մթնոլորտային օդի որակով, զննության են առնվել բնապահպանական միջոցառումների պետական ֆինանսավորման իրավական կարգավորումն ու ծավալները, ներկայացվել է մթնոլորտային օդի պահպանությանն ուղղված նյութական խրախուսման ազգային փորձը և դրա պահպած արդյունքները։ Նաև գնահատվել են <<-ում մթնոլորտային արտանետումների և տնտեսության զարգացման միջև փոխկապվածությունները։

Մթնոլորտային արտանետումների կանխարգելման հարցում ազգային տնտեսական կառուցակարգի արդյունավետության վերաբերյալ պատկերացում կազմելու նպատակով այս գիտում դիտարկել ենք <<-ում արտանետման անշարժ աղբյուրներից անջատված, որսված և մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի շարժընթացները 2013-2022թթ. (տե՛ս Գծապատկեր 2):



Գծապատկեր 2. Արտանետման անշարժ աղբյուրներից անջատված, որսված և մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի քանակը <<-ում 2013-2022 թթ.<sup>6</sup>

Հետազոտությունների արդյունքում բացահայտել ենք, որ <<-ում անջատված վնասակար նյութերի որսում առավելապես կատարվում է Արարատի և Կոտայքի

<sup>6</sup>Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից, տվյալների աղբյուր՝ << Վիճակագրական կոմիտե, «Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում 2017 թվականին», 2018թ., էջ 49-50, [https://armstat.am/file/article/eco\\_book\\_2017\\_8.pdf](https://armstat.am/file/article/eco_book_2017_8.pdf), «Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում 2022 թվականին», 2023թ., էջ 86-87, [https://armstat.am/file/article/eco\\_book\\_2022\\_8.pdf](https://armstat.am/file/article/eco_book_2022_8.pdf)

մարզերում, իսկ այլ մարզերում և Երևան քաղաքում այդ ցուցանիշը գրոյական կամ բավականին ցածր մակարդակի վրա է գտնվում: Այս Երևոյթը, ըստ Էպօյան, պայմանավորված է նշված մարզերում ցեմենտի գործարանների առկայությամբ: Ցեմենտի գործարաններում անջատվող վնասակար նյութերի ծավալը մեծ է, միաժամանակ բարձր է նաև անջատված արտանետումների որսման ցուցանիշը, օրինակ՝ «Արարատցեմենտ» ՓԲԸ-ում վառարանների փոշու կլանման արդյունավետությունը կազմում է 99.7%<sup>7</sup>: Մասնավորաբար՝ 2022թ. Արարատի մարզում որսված նյութերի քանակը ավելի քան 197 հազար տոննա է եղել, որը կազմում է միևնույն թվականին ողջ հանրապետությունում որսված նյութերի գործեթ 90%-ը, Կոտայքի մարզում՝ շուրջ 19 հազար տոննա՝ կազմելով ընդհանուրի ավելի քան 8%-ը, միաժամանակ հավելենք՝ տվյալ մարզերում անջատված նյութերի որսման մակարդակը համապատասխանաբար կազմում է 98% և 43%<sup>8</sup>: Երևանում 2022թ. որսվել է անջատված նյութերի ընդհանուր 14%-ը, Սյունիքի մարզում՝ 6%-ը, Լոռու մարզում՝ 0.03%-ը, իսկ մնացած մարզերում որսման ցուցանիշը եղել է զրոյական<sup>9</sup>:

Այսպիսով՝ եթե Հայաստանում արտանետման անշարժ առըյութներից անջատված և որսված նյութերի քանակից բացառենք Արարատի և Կոտայքի մարզերի համապատասխան ցուցանիշները, ապա անջատված նյութերի որսման մակարդակը կկազմի ընդհանուր 4%: Այսօրինակ ցուցանիշի պարագայում էլ միանգամայն բնական է << բնակչության՝ մթնոլորտային օդի որակով (պայմանավորված արդյունաբերական արտանետումներով) բավարարվածության խիստ ցածր մակարդակը, որը տատանվում է 3-4 %-ի շրջակայքում<sup>10</sup>:

Ավտոտրանսպորտային արտանետումների ուսումնասիրության արդյունքում արձանագրել ենք, որ դրանք աճի միտում են դրսևորում, և մթնոլորտային օդի աղտոտման հարցում ավտոտրանսպորտային արտանետումների մասնաբաժնը գերակշռում է՝ վերջին չորս տարիներին տատանվելով 70%-ի շրջակայքում: Նման ցուցանիշը պայմանավորված է ինչպես ավտոտրանսպորտային միջոցների քանակի

<sup>7</sup> Ժամապարյան Գ., «Մթնոլորտային օդի որակի պահպանությանն ուղղված տնտեսական կառուցակարգը <<-ում»: ԲԱՆԲԵՐ ՀՊՏՀ, № 2, 2022, էջ 132-145, DOI: 10.52174/1829-0280\_2022.2-132

<sup>8</sup> << Վիճակագրական կոմիտե, «Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում 2022 թվականին», 2023թ., էջ 86-87,

[https://armstat.am/file/article/eco\\_book\\_2022\\_8.pdf](https://armstat.am/file/article/eco_book_2022_8.pdf)

<sup>9</sup> Տե՛ս նոյն տեղը

<sup>10</sup> << Վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք, «Բնակչության բավարարվածությունը շրջակա միջավայրի վիճակով, ըստ բոլորի տեսակի, ըստ մարզերի և ըստ տարիների», [https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank\\_\\_8%20Environment\\_Life%20quality/EE-lq-10.px/table/tableViewLayout2/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb](https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__8%20Environment_Life%20quality/EE-lq-10.px/table/tableViewLayout2/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb) (Վերջին մուտք՝ 28.05.2024)

շարունակաբար աճով, այնպես էլ ավտոտրնասպորտային ազգային պարկի էկոլոգիական տեսանկյունից ցածր որակով: Այս համատեքստում որպես դրական տեղաշարժ արձանագրվել է էլեկտրամոբիլների ձեռքբերումն ու շահագործումը խթանելու նպատակով «Կանաչ» սուբսիդիաների կիրարկումը, ինչը էականորեն նպաստել է հանրապետությունում էլեկտրական շարժիչով ավտոմեքենաների քանակի ավելացմանը:

Այսուհանդերձ, լուրջ մտահոգություն է առաջացնում պետական բնապահպանական ծախսերի տեսակարար կշիռը <ՆԱ-ում, քանի որ այն տատանվում է 0.1%-ի շուրջ, մինչդեռ նշշած ցուցանիշը աշխարհի զարգացած երկրներում բազմապատճիկ ավել է, օրինակ՝ Եվրոպական միությունում գտնվում է 2%-ի շրջակայրում<sup>11</sup>:

Պարզել ենք նաև, որ, համաձայն Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության տվյալների, Հայաստանում մթնոլորտային օդի միայն PM<sub>2.5</sub>-ով աղտոտման հետևանքով վաղաժամ մահվան հետ կապված սոցիալական տարեկան ծախսերը ահոելի չափսերի են հասնում և վերջին տարիներին համարժեք են եղել <ՆԱ-ի ավելի քան 11%-ին, մասնավորաբար՝ 2019թ. այդ ցուցանիշը եղել շուրջ 11.7%, համեմատության համար նշենք, որ ԵՄ միջին ցուցանիշը կազմել է 3.3%<sup>12</sup>, մինչդեռ միևնույն թվականին Հայաստանում մթնոլորտային արտանետումների համար բնապահպանական հարկերի <ՆԱ-ում ունեցած տեսակարար կշիռը կազմել է ընդամենը 0.04%, ինչը վկայում է բնապահպանական հարկերը ապահովում են մթնոլորտի աղտոտմամբ առաջացող բացասական էքստերնալ ծախսերի ինտերնալիզացիայի խիստ ցածր մակարդակ:

Մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի ծավալների և <ՆԱ-ի փոխազդեցության գնահատման արդյունքում բացահայտել ենք՝ թե՛ կարճաժամկետում, թե՛ երկարաժամկետում <ՆԱ-ի և անշարժ աղբյուրներից մթնոլորտային արտանետումների միջև առկա է դրական կապ: Մասնավորապես՝ կարճաժամկետում <ՆԱ-ի տոկոսային փոփոխության 1 տոկոսային կետով ավելացումը տվյալ տարում, այլ հավասար պայմաններում, հանգեցնում է տվյալ տարում արտանետումների տոկոսային փոփոխության ավելացմանը միջինում 0.2 տոկոսային կետով: Երկարաժամկետում, երբ <ՆԱ-ի տոկոսային աճը տվյալ տարում ավելանա 1 տոկոսային կետով, ապա, այլ հավասար պայմաններում, արտանետումների տոկոսային աճը 12 տարի հետո կավելանա միջինում 0.6

<sup>11</sup>Գասպարյան Գ., «Շրջակա միջավայրի պահպանության ոլորտի ֆինանսավորման հիմնախնդիրը <<-ում» . Տարածաշրջան և աշխարհ, № 6, Երևան, 2020, Էջ 101-104

<sup>12</sup>OECD.Stat, Mortality, morbidity and welfare cost from exposure to environment-related risks, [https://stats.oecd.org/Index.aspx?DataSetCode=EXP\\_MORSC#](https://stats.oecd.org/Index.aspx?DataSetCode=EXP_MORSC#) (last acces - 28.05.2024)

տոկոսային կետով: Ճգնաժամի տարիներին արտանետումների տոկոսային փոփոխությունները միջինում 7 տոկոսային կետով ավելի են եղել՝ համեմատած ոչ ճգնաժամային տարիներին: Իսկ ավտոտրանսպորտից մթնոլորտային արտանետումների վրա ՀՆԱ-ի ազդեցությունը կարճաժամկետում չի նկատվում: Կապը սկսվում է նկատվել 3 լագ ուշացումով: Մասնավորաբե՞՛ ՀՆԱ-ի տոկոսային փոփոխության 1 տոկոսային կետով ավելացումը տվյալ տարում, այլ հավասար պայմաններում, հանգեցնում է արտանետումների տոկոսային փոփոխության ավելացմանը միջինում 0.15 տոկոսային կետով 3 տարի հետո: Տվյալ տարում ՀՆԱ-ի տոկոսային փոփոխության 1 տոկոսային կետով ավելացումը, այլ հավասար պայմաններում, հանգեցնում է երկարաժամկետում՝ 11 տարի հետո, արտանետումների տոկոսային փոփոխության նվազման միջինում 0.2 տոկոսային կետով: Ճգնաժամի տարիներին արտանետումների տոկոսային փոփոխությունները միջինում 8 տոկոսային կետով պակաս են եղել ոչ ճգնաժամային տարիների համեմատ: Ստացված արդյունքները փաստում են զարգացման տեխնոգեն մոդելից կայուն զարգացմանն անցնելու անհրաժեշտությունը և ընդգծում այդ գործում ազգային տնտեսական կառուցակարգի բարեփոխման կարևորությունն ու առաջնահերթությունները:

Ատենախոսության երրորդ՝ «Մթնոլորտային օդի պահպանության տնտեսական կառուցակարգի բարեփոխման գերակայությունները ՀՀ-ում» գլխում ներկայացվել են մթնոլորտային օդի պահպանության ազգային տնտեսական կառուցակարգի հիմնախնդիրները, ինչպես նաև ուրվագծվել են մթնոլորտային օդի պահպանության գործող տնտեսական կառուցակարգի զարգացման առաջնահերթությունները և վերջիններիս հիմնա վրա առաջարկվել մթնոլորտային օդի պահպանության ազգային տնտեսական կառուցակարգի կատարելագործման ու զարգացման ուղիները:

ՀՀ-ում ավտոտրանսպորտային արտանետումների համար բնապահպանական հարկման ուսումնասիրության արդյունքում եղրակացրել ենք, որ մարդատար ավտոտրանսպորտային միջոցների բնապահպանական հարկի գործող մեթոդաբանությունը չի ապահովում էկոլոգիական գործոնի արդյունավետորեն հաշվառում՝ պայմանավորված բնապահպանական հարկի ըստ ավտոտրանսպորտային միջոցի շարժիչի հզրության հաշվարկման: Ըստ արտանետումների ցուցանիշների բնապահպանական հարկի սահմանումը դիտարկելով որպես լավագույն ուղենիշ՝ Հայաստանում որպես միջանկյալ և գործող մեթոդաբանությունից առավել արդյունավետ տարբերակ առաջարկել ենք բնապահպանական հարկի ըստ շարժիչի աշխատանքային ծավալի սահմանումը, որը առավել նպատակահարմար է էկոլոգիական ազդեցության արդյունավետորեն

հաշվառման տեսանկյունից, քանի որ արտանետումների և շարժիչ աշխատանքային ծավալի միջև կապն ավելի ուժեղ է՝ ի տարբերություն արտանետումների և շարժիչ հզորության միջև կապի: Դա պայմանվորված է այն հանգամանքով, որ նորարարական տեխնոլոգիաներով ու լուծումներով կառուցված շարժիչները վառելիքի համեմատաբար ցածր ծախսով ունակ են ապահովել համաշափ հզորություն շարժիչ ավելի նվազ աշխատանքային ծավալի դեպքում: Գործող մեթոդաբանությունը ըստ շարժիչի աշխատանքային ծավալի փոխակերպման համար դիտարկել ենք Ղազախստանում տրանսպորտային հարկի սահմանման մեթոդաբանությունը, որը առանձնանում է շարժիչի աշխատանքային ծավալի և հարկի փոխակապվածության բարձր ճկունությամբ: Արդյունքում առաջարկել ենք դրա տեղայնացման և կիրարկման հնարավոր տարբերակը:

Մեթոդական բարեփոխումներից զատ նաև բացահայտել ենք, որ բնապահպանական հարկի դրույթաչափերի վերանայման անհրաժեշտություն ևս կա՝ առնվազն գնաճի հաշվառման տեսանկյունից: Թե՛ արտանետման անշարժ, թե՛ շարժական աղբյուրներից մթնոլորտային արտանետումների բնապահպանական հարկման դրույթաչափերը սահմանման պահից ի վեր գնաճի նկատմամբ չեն ճշգրտվել, ինչի արդյունքում էականորեն արժեզրկվել են. օրինակ՝ բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներից արտանետումների համար բնապահպանական հարկի գործող դրույթաչափերի սահմանման պահից ցայսօր գնաճը կազմում է ավելի քան 90%: Խնդրին լուծում տալու նպատակով առաջարկել ենք տեղայնացնել Ղազախստանում կիրառվող մոտեցումը: Այստեղ արտանետումների հարկի դրույթաչափերը սահմանվում են գործակիցների տեսքով, որոնք բազմապատկվում են ամսական հաշվարկային ցուցանիշով (ԱՀՅ): Օրինակ՝ SOx-ի արտանետված մեկ տոննայի դրույթաչափը է ԱՀՅ-ի տասնապատիկին: ԱՀՅ-ն յուրաքանչյուր տարի սահմանվում է կառավարության կողմից՝ հաշվի առնելով գնաճը և այլ գործոններ, այնուհետև դա օգտագործվում է հարկերը որոշելու համար<sup>13</sup>: Մասնավորաբար՝ եթե 2023թ. հունվարի 1-ից ԱՀՅ-ն կազմել է 3450 տեսքե, ապա 2024թ. հունվարի 1-ից արդեն՝ 3692 տեսքե<sup>14</sup>:

Հաշվի առնելով հանրապետությունում արտանետման անշարժ աղբյուրներից անջատվող նյութերի որսման ցածր մակարդակը և տնտեսավարող սուբյեկտների կողմից օդապահպան միջոցառումների իրականացման նախաձեռնությունների բացակայությունը՝ բնապահպանական հարկի դրույթաչափերի բարձրացմանը

<sup>13</sup> OECD (2019), Addressing Industrial Air Pollution in Kazakhstan: Reforming Environmental Payments Policy Guidelines, OECD Green Growth Studies, OECD Publishing, Paris, էջ 28-29

<https://doi.org/10.1787/0e04ea86-en>

<sup>14</sup> МЗП, МРП, прожиточный минимум за 1995 - 2024 годы,

[https://online.zakon.kz/Document/?doc\\_id=1026672](https://online.zakon.kz/Document/?doc_id=1026672)

զուգահեռաբար, ինչը միանգամայն համապատասխանում է << զարգացման ռազմավարական քաղաքականությանը, առաջարկել ենք «Կանաչ» սուրսիրիաների կիրարկման նոր մոտեցում, մասնավորապես՝ արտանետման անշարժ առյուրներից օդապահպան միջոցառումների իրականացման արդյունքում արտանետումների կրճատման դիմաց տնտեսավարող սուրբեկուներին հարկային արտոնություններ տրամադրել:

Հայաստանում մթնոլորտային օդի պահպանության տնտեսական գործիքակազմի ողջ ներուժի իրացման և արդյունքում արտանետումների կրճատման համար բարենպաստ տնտեսական պայմաններ ապահովելու նպատակով առաջարկել ենք արտանետումների թույլտվությունների առևտորի համակարգի (ԱԹԱՀ) տեղայնացման և ազգային կիրառության գիտափորձնական ծրագիր: Որպես ծրագրի իրականացման վայր ընտրել ենք մայրաքաղաք Երևանը, ինչը պայմանվորված է արտանետման անշարժ արդյուրներից մեկ կմ<sup>2</sup> հաշվով մթնոլորտային արտանետումների քանակով Երևանի բացարձակ առաջատար լինելու հանգամանքով, որը ենթադրում է՝ Երևանում մթնոլորտային արտանետումներով պայմանավորված սոցիալական ծախսերը գերակշռում են: Որպես առաջնային ընդգրկման ենթակա աղյուսիչ դիտարկել ենք փոշին, որի նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացման խնդիրը Էկոլոգատնտեսական տեսանկյունից ամենահրատապն է: Ծրագրի առաջարկման համար հիմք է հանդիսացել Հնդկաստանի Գուಡրաթ նահանգի Սուրաթ և Մհմադաբադ քաղաքներում որոշակիորեն համանման ծրագրի հաջող իրականացումը: Հաշվի առնելով ազգային տնտեսական առանձնահատկություններն ու հնարավորությունները, ինչպես նաև ԱԹԱՀ-ի կիրարկման միջազգային փորձը՝ ներկայացվել է Հայաստանում ԱԹԱՀ-ի տեղայնացման և գործարկման ենթակա տարրերակը:

Ատենախոսությունը եզրափակվում է «Եզրակացություններ և առաջարկություններ» բաժնով, որտեղ ատենախոսական աշխատանքում իրականացված ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա ձևակերպվել են հետևյալ ընդհանրական եզրակցությունները և առաջարկությունները.

- Շուկայական տնտեսության պայմաններում շրջակա միջավայրի, այդ թվում՝ մթնոլորտային օդի պահպանության գործում տնտեսական կառուցակարգի կիրառումը առանցքային կարևորություն ունի, ինչը պայմանավորված է շուկայի ձախողմաբ, մասնավորապես՝ էքստերնալների առաջացմաբ, որոնց ինտերնալիզացիայի անհրաժեշտությունն էլ շրջակա միջավայրի պահպանության բնագավառում տնտեսական կառուցակարգի ձևակերպման շարժադիր է հանդիսացել: Բացի այդ, տնտեսական կառուցակարգի

- գործադրումը, ի տարբերություն այլ եղանակների, կարող է ապահովել շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության կրճատում առավել ցածր ծախսերով:
- Աշխարհում առ այսօր ձևավորվել է մթնոլորտային օդի պահպանության տնտեսական կառուցակարգի բազմաբաղդրիչ գործիքակազմ, որի յուրաքանչյուր գործիք հիմնված է սկզբունքորեն տարբեր մոտեցման վրա, մասնավորաբար՝ մի դեպքում տնտեսավարող սուբյեկտները մթնոլորտային օդի աղոտություն համար հարկեր են վճարում, մյուս դեպքում ֆինանսական օժանդակություն են ստանում արտանետումների կրճատման նպատակով, իսկ մեկ այլ դեպքում նրանց արտանետումների տնտեսած թույլտվությունների վաճառքից եկամուտներ ապահովելու հնարավորություն է ընծեռնվում: Այսուհանդերձ, հարկ է ընդգծել, որ գոյություն չունի առանձին ամենազոր գործիք, որի միջոցով հնարավոր է համեմ առաջարկված էկոլոգատնտեսական նպատակներին, այլ անհրաժեշտ է տնտեսական գործիքների համատեղ գործադրում, ինչի շնորհիվ հնարավոր կլինի ապահովել թե՛ արտաքին ծախսերի ինտերնալիզացիա և թե՛ արտանետումների կրճատման տնտեսական գրավչություն: Դրա մասին են փաստում աշխարհի գարգացած երկրների՝ արտանետումների ծավաների կրճատման հարցում գրանցած հաջողությունները, ինչը վկայում է հասարակության և, ընդհանրապես, ողջ բնուտայի համար անվտանգ մթնոլորտային օդ ապահովելու տնտեսական գործիքազմի բավարար ներուժի մասին:
  - <<-ում մթնոլորտային օդի պահպանության բնագավառում գործադրվող տնտեսական կառուցակարգը ձևավորման սկզբից ի վեր ենթարկվել է որոշակի բարեփոխումների, և այժմ որպես հիմնական տնտեսական գործիք է հանդիսանում բնապահպանական հարկը, որը, սակայն, ներկայումս տնտեսապես չի խթանում օդապահպան միջոցառումների իրականացումը, ինչի մասին են փաստում արտանետման անշարժ աղբյուրներից անջատված վնասակար նյութերի որսման ցածր մակարդակը և տնտեսավարող սուբյեկտների կողմից արտանետումների կրճատմանն ուղղված նախաձեռնությունների բացակայությունը:
  - Որպես ավտոտրանսպորտային արտանետումների կրճատմանն ուղղված դրական փորձ դրսնորվել է մթնոլորտային օդի պահպանության տնտեսական կառուցակարգի նոր գործիք՝ հարկային արտոնության կիրառությունը: Հետագության արդյունքները վկայում են՝ նոր գործիքի կիրարկումը էականորեն նպաստել է հանրապետությունում էլեկտրամոբիլների թվաքանակի ավելացմանը: Դա վերահաստատում է «Կանաչ» սուբսիդիաների՝

Էկոլոգատնտեսական դրական արդյունքներ ապահովելու գործում կենսունակությունը և վկայում նմանօրինակ մոտեցումների շարունակման և ընդլայնման նպատակահարմարության մասին:

- Մթնոլորտային օդի պահպանության տնտեսական կառուցակարգի ազգային մողելը առավելապես «փափուկ» բնույթի է և, ըստ Էռլայան, գործում է «աղտոտի՞ր, բայց վճարի՞ր» սկզբունքով, մինչդեռ մթնոլորտային օդի աղտոտվածությամբ պայմանավորված տնտեսությանը հասցվող զգայի կորուստների և հասարակության՝ մթնոլորտային օդի որակով անբավարարվածության պայմաններում տնտեսական կառուցակարգի խթանող մոդելին անցում կատարելը կայուն զարգացման ապահովման տեսանկյունից ժամանակի հրամայականն է:
- Շրջակա միջավայրի պահպանության միջոցառումների պետական ֆիանանսավորման օրենքով սահմանված ծավալների և փաստացի ֆիանսավորման անհամապատասխանությունը, ինչպես նաև վերջինիս նվազ տեսակարար կշիռը <ՆԱ-ում վկայում են, որ այս հարցում անհրաժեշտ է իրականացնել թե՛ իրավական կարգավիրման ճշգրտումներ, թե՛ բնապահպանական միջոցառումների ֆիանանսավորման համար պետական եկամուտների ավելացմանն ուղղված միջոցառումներ:
- <<-ում մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի ծավալների և <ՆԱ-ի փոխազդեցության գնահատման արդյունքում բացահայտվել է, որ թե՛ կարճաժամկետում, թե՛ երկարաժամկետում անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի և <ՆԱ-ի ծավալների միջև նկատվում է դրական կապ, իսկ ավտոտրանսպորտային արտանետումների վրա <ՆԱ-ի ծավալների ազդեցություն կարճաժամկետում չի նկատվում, դրական կապ է նկատվում 3 լագ ուշացումով, իսկ երկարաժամկետում՝ 11 տարի հետո դրսնորվում է բացասական կապ: Բացահայտված կապերը փաստում են անշարժ աղբյուրներից մթնոլորտային արտանետումների կրճատման հարցում տնտեսական կառուցակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված քայլերի նախաձեռնման խիստ անհրաժեշտությունը և ավտոտրանսպորտային արտանետումների տնտեսական կարգավիրման գործիքակազմի հետագա լավարկման կարևորությունը:
- Ավտոտրանսպորտային միջոցների բնապահպանական հարկման գործող մեթոդաբանությունը չի ապահովում էկոլոգիական գործոնի արդյունավետորեն հաշվառում՝ պայմանավորված բնապահպանական հարկի ըստ շարժիչի հզորության ծևավիրման մեթոդական մոտեցմամբ, իսկ գործող դրույթաչափերը սահմանման պահից ի վեր գնաճի նկատմամբ չեն ճշգրտվել.

ինչի արդյունքում դրանք էականորեն արժեգրկվել են, մինչդեռ ավտոտրանսպորտային արտանետումները ընդհանուր արտանետումներում գերակշռում են, իսկ դրանց դիմաց գանձվող բնապահպանական հարկերը բազմապատիկ գերազանցում են անշարժ աղբյուրներից մթնոլորտային արտանետումների համապատասխան հարկերին: Բացահայտված մեթոդական և համակարգային խնդիրներին լուծում տալու նպատակով առաջարկվել է ավտոտրանսպորտային արտանետումների բնապահպանական հարկման նոր մեթոդաբանություն, որի դեպքում բնապահպանական հարկի հաշվարկը իրականացվում է շարժիչի աշխատանքնային ծավալի հիման վրա, իսկ դրույթաչափերի արժեքի պահպանման համար՝ նոր եղանակ, որը ապահովում է դրույթաչափերի սահմանման գործընթացում գնաճի հաշվառում: Այս ամենի արդյունքում ապահովվելու է «Աղտոտող վճարում է» սկզբունքի արդարացիորեն իրացում և առավել անվտանգ ավտոտրանսպորտային միջոցների շահագործման խթանում, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումների ֆիանանսավորման համար պետական եկամուտների էական ավելացում:

- Արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային արտանետումների բնապահպանական հարկի գործող դրույթաչափերը ոչ միայն հնարավորություն չեն տալիս փոխհատուցելու մթնոլորտային օդի աղտոտման արդյունքում հասցվող վնասը և չեն խթանում օդապահպան միջոցառումների իրականացումը, այլև, չնայած 2018-2020թթ. որոշակի բարձրացմանը, ժամանակի ընթացքում արժեգրկման պատճառով իրականում նվազել են: Այս դեպքում ևս միջազգային հաջող փորձի հիման վրա առաջարկվել է համակարգային լուծում ուղղված դրույթաչափերի արժեքի պահպանմանը:
- Արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային արտանետումների բնապահպանական հարկի խթանիչ հատկության բարձրացման նպատակով առաջարկվել է նաև բնապահպանական հարկի արտոնության կիրառման նոր մոտեցում, որը ենթադրում է տնտեսավարող սուբյեկտներին օդապահպան միջոցառումների շնորհիվ արտանետումների կրճատման դիմաց հարկային արտոնությունների տրամադրում: Իսկ մթնոլորտային օդի պահպանության հարցում տնտեսական գործիքակազմի ողջ ներուժի իրացման բացը լրացնելու և մթնոլորտային օդի աղտոտվածությունը կրճատելու նպատակով << զարգացման ռազմավարական քաղաքականությանը համահունչ առաջարկվել է միջազգային մակարդակում հաջողություններ գրանցած ԱԹԱՀ-ի տեղայնացման ու գործարկման գիտափորձնական ծրագիր, որի հաջող

իրագործման դեպքում կստեղծվեն մայրաքաղաքում մթնոլորտային օդի փոշով աղտոտվածության կրնատման տնտեսապես բարենպաստ պայմաններ:

## **Ատենախոսության հիմնական արդյունքները և դրույթները հրատարակվել են հետևյալ գիտական հոդվածներում՝**

- Գասպարյան Գ., Աֆյան Ն.,** «Շրջակա միջավայրի պահպանության տնտեսական մեխանիզմի գործիքակազմը», «**ԲԱՆԲԵՐ ՀՊՏՀ**», 4(56), 2019, էջ 108-118;
- Գասպարյան Գ.,** «Շրջակա միջավայրի պահպանության ոլորտի ֆինանսավորման հիմնախնդիրը ՀՀ-ում», «**Տարածաշրջան և աշխարհ**» գիտավերլուծական հանդես, № 6, 2020, էջ 101-104;
- Գասպարյան Գ.,** «Մթնոլորտային օդի ռուկի պահպանությանն ուղղված տնտեսական կառուցակարգը ՀՀ-ում», «**ԲԱՆԲԵՐ ՀՊՏՀ**», № 2, 2022, էջ 132-145, DOI: 10.52174/1829-0280\_2022.2-132;
- Գասպարյան Գ.,** «Շրջակա միջավայրի պահպանության տնտեսական կառուցակարգի տեսամեթոդական հիմունքներն ու առանձնահատկությունները». «**Գիտական Արցախ**» պարբերական, № 2(17), 2023, էջ 183-197, DOI:10.52063/25792652-2023.2.17-183;
- Գասպարյան Գ.,** «Մթնոլորտային օդի պահպանության տնտեսական կառուցակարգի գործիքակազմն ու կիրարկման միջազգային փորձը». «**Գիտական Արցախ**» պարբերական, № 1(20), 2024, էջ 209-224, DOI:10.52063/25792652-2024.1.20-209;
- Gasparyan G., Ghantarchyan R., Terzyan H.**, «GDP Growth Consequences for the Air Pollution Levels in Armenia», «**MESSENGER of ASUE**», 1(76), 2024, pp. 121-132. DOI: 10.52174/1829-0280\_2024.1-121;
- Gasparyan G.**, «The Improvement of the Environmental Taxation of Vehicle Emissions in Armenia», «**Region and the World**» Scientific-Analytical Journal, №3, 2024, pp. 93-98, DOI: 10.58587/18292437-2024.3-93;
- Gasparyan G.**, «Improving the Economic Toolkit of Regulation of Atmospheric Emissions from Stationary Sources in Armenia», «**ALTERNATIVE academic journal**», №2, 2024, pp. 125-134, DOI: 10.55528/18292828-2024.2-125;

**Гаспарян Гарри Гарикович**

**ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ ЭКОНОМИЧЕСКОГО МЕХАНИЗМА В ОБЛАСТИ  
ОХРАНЫ АТМОСФЕРНОГО ВОЗДУХА В АРМЕНИИ**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 - «Экономика и управление народным хозяйством и его отраслями».

Защита диссертации состоится 24-го января 2025г. в 15:00 часов, на заседании Специализированного совета 015Комитета по высшему образованию и науке Республики Армения действующего в Ереванском государственном университете, по адресу: 0025, г. Ереван, ул. Х. Абояна 52

**АННОТАЦИЯ**

Проблема охраны атмосферного воздуха довольно остро стоит в Республике Армения. По данным опубликованным Организацией Объединенных Наций, загрязнение атмосферного воздуха в Армении во много раз превышает показатели, установленные Всемирной организацией здравоохранения, и ежегодно приводит к тысячам смертей граждан, в результате чего потери от загрязнения атмосферного воздуха в республике эквивалентны более 11% ВВП Армении. Помимо негативных экономических последствий загрязнения атмосферного воздуха, следует также отметить, что чистая, здоровая и устойчивая окружающая среда является неотъемлемой частью прав человека. Мировой опыт охраны окружающей среды показывает, что одним из эффективных подходов к охране окружающей среды, в том числе атмосферного воздуха, является применение экономического механизма.

С момента обретения Арменией независимости в сфере охраны атмосферного воздуха сформировался и действует определенный экономический механизм. Однако, учитывая сложившуюся эколого-экономическую ситуацию в республике, обусловленную загрязнением атмосферного воздуха, а также очень низкий уровень улавливания вредных веществ, выделяющихся из стационарных источников выбросов в атмосферу, и тенденцию к увеличению выбросов, становится очевидным, что разработка и реализация шагов и мер, направленных на повышение эффективности национального экономического механизма охраны атмосферного воздуха является весьма актуальной и неотложной.

**Цель и задачи исследования:** Целью исследования является выявление существующих фундаментальных проблем экономического механизма, применяемой в области охраны атмосферного воздуха в Республике Армения, и выдвижение возможных путей их решения. Для достижения заявленной цели в диссертации были поставлены и решены следующие основные задачи:

- изучить теоретико-методологические основы и особенности экономического механизма, применяемой в области охраны окружающей среды, в контексте охраны атмосферного воздуха,

- проанализировать и изучить экономические инструменты охраны атмосферного воздуха и международный опыт их применения,
- изучить национальный экономический механизм охраны атмосферного воздуха и оценить эколого-экономические результаты, обеспечиваемые им,
- оценить взаимосвязь между выбросами в атмосферу и экономическим развитием РА,
- выявить недостатки экономического механизма регулирования выбросов автотранспорта и указать возможные пути их устранения и возможности реформирования механизма,
- с целью обеспечения сокращения выбросов в атмосферу от стационарных источников предложить дорожную карту по совершенствованию действующего экономического механизма и наметить приоритеты развития механизма.

**Объектом исследования** является экономический механизм, применяемый в области охраны атмосферного воздуха в Армении. **Предметом исследования** являются проблемы совершенствования и развития национального экономического механизма охраны атмосферного воздуха.

**Научная новизна диссертации.** На основе исследования, проведенного в рамках диссертации, получен ряд результатов, из которых основными положениями, отражающими научную новизну, являются:

- В результате оценки влияния экономического развития на выбросы в атмосферу в Армении выявлены существующие взаимосвязи между ВВП и выбросами в атмосферный воздух.
- Выявив методологические и системные проблемы налогообложения выбросов вредных веществ автотранспортными средствами в атмосферный воздух, мы предложили новые подходы к экологическому налогообложению, эффективно учитывающие экологический фактор.
- Обосновав необходимость повышения эффективности экономического механизма регулирования выбросов в атмосферный воздух из стационарных источников, мы предложили приоритетные шаги по совершенствованию его инструментария и разработали современный научно-экспериментальный подход к пополнению.

## **Gasparyan Garri Garik**

### **PROBLEMS OF DEVELOPMENT OF THE ECONOMIC MECHANISM IN THE FIELD OF ATMOSPHERIC AIR PROTECTION IN ARMENIA**

Abstract of the thesis for receiving the degree of the PhD in Economics for the specialty 08.00.02 – “Economy, the economics of its spheres and control”.

The defense of the dissertation will take place at 15:00 PM, on January 24th, 2025 at the Meeting  
of

the Specialized Council 015 in Economics of the Higher Education and Science Committee of  
the Republic of Armenia acting at the Yerevan State University, by address:  
52 Abovyan str., Yerevan, 0025

#### **ABSTRACT**

The problem of atmospheric air protection is quite acute in the Republic of Armenia. According to data published by the United Nations, atmospheric air pollution in Armenia is many times higher than the air quality guideline levels set by the World Health Organization, and annually leads to thousands of deaths of citizens, as a result of which losses from atmospheric air pollution in the republic are equivalent to more than 11% of Armenia's GDP. In addition to the negative economic consequences of air pollution, it should also be noted that a clean, healthy and sustainable environment is an integral part of human rights. World experience of environmental protection shows that one of the most effective approaches to environmental protection, including atmospheric air, is the use of an economic mechanism. Since Armenia gained independence, a certain economic mechanism has been formed and is operating in the field of atmospheric air protection. However, taking into account the current environmental and economic situation in the republic, caused by air pollution, as well as the very low level of capturing of harmful substances released from stationary sources of atmospheric emissions, and the trend of increasing emissions, it becomes obvious that the development and implementation of steps and measures aimed at improving the efficiency of the national economic mechanism of atmospheric air protection is highly relevant and urgent.

**The Purpose and Objectives of the Research:** The purpose of the research is to identify the existing fundamental problems of the economic mechanism used in the field of atmospheric air protection in the Republic of Armenia, and to put forward possible ways to solve them. In order to achieve the stated goal, the following tasks were proposed and solved in the dissertation:

- to study the theoretical and methodological foundations and features of the economic mechanism used in the field of environmental protection in the context of atmospheric air protection,
- to analyze and study the economic instruments of atmospheric air protection and the international experience of their application,
- to study the national economic mechanism of atmospheric air protection and evaluate the environmental and economic results provided by it,

- to assess the relationship between atmospheric emissions and economic development in the Republic of Armenia,
- to identify the imperfections of the economic mechanism of regulating vehicle emissions and indicate possible ways to eliminate them and the possibilities of reforming the mechanism,
- in order to ensure the reduction of emissions into the atmosphere from stationary sources, to propose a roadmap for improving the current economic mechanism and outline priorities for the development of the mechanism.

**The object of the research** is the economic mechanism used in the field of atmospheric air protection in Armenia. **The subject of the research** are the issues of improving and developing the national economic mechanism of atmospheric air protection.

**The scientific novelty of the dissertation.** Based on the research conducted within the framework of the dissertation, a number of results were obtained, among which the main provisions reflecting scientific novelty are:

- As a result of assessing the impact of economic development on air emissions in Armenia, the existing relationships between GDP and atmospheric emissions were revealed.
- Having identified methodological and systemic problems of taxation of emissions of harmful substances from vehicles into the atmospheric air, we have proposed new approaches to environmental taxation that effectively take into account the environmental factor.
- Having justified the need to improve the efficiency of the economic mechanism for regulating emissions into the atmosphere from stationary sources, we have proposed priority steps to improve its toolkit and developed a modern scientific and experimental approach to replenishment.

